

**Կենսաբանություն, I ՓՈՒԼ  
տևողությունը 60րոպե  
10-րդ դասարան**

**Ընտրովի պատասխանով առաջադրանքներ**

Յուրաքանչյուր թեստում առաջարկվում է 4 պատասխան: Ընտրեք միայն մեկը, որը, ըստ Ձեզ, առավել ճիշտ է և ամբողջական:

**1. Սոճու իզական կոներում առաջանում են.**

1. փոշեպարկեր
2. սերմնասկզբնակներ
3. սպորներ
4. և՛ փոշեպարկեր, և՛ սերմնասկզբնակներ

**2. Սպիրոգիրան տարբերվում է քլորելայից նրանով, որ**

1. քլորելան, բացի քլորոֆիլից, ունի նաև ֆուկոքսանտին գունակը
2. սպիրոգիրան կանաչ ջրիմուռ է, իսկ քլորելան՝ գորշ
3. քլորելան միաբջիջ ջրիմուռ է, իսկ սպիրոգիրան՝ բազմաբջիջ
4. քլորելան անշարժ է

**3. Քրոմոսոմների տրիպլոիդ հավաքակազմ է պարունակում ծաղկավոր բույսի**

1. գեներատիվ բջիջը
2. էնդոսպերմը
3. վեգետատիվ բջիջը
4. զիգոտը

**4. Ավտոգամիան բնորոշ է.**

1. արմատոտանիներին
2. մտրակավորներին
3. սպորակիրներին
4. ինֆուզորիաներին

**5. Պտերի սպորից առաջանում է.**

1. նախածիլը
2. սպորանգիումը
3. հասուն բույսը
4. զիգոտը

**6. Սրտի զանգվածի մեծացմանը և միոկարդի հաստացմանը կարող է հանգեցնել.**

1. աորտայի լայնացումը
2. աորտայի նեղացումը
3. թոքային զարկերակների լայնացումը
4. արյան ճնշման բարձրացումը

**7. Տրանսյացիային մասնակցող փ-ՌՆԹ-երի քանակը հավասար է.**

1. ամինաթթուներ կոդավորող ի-ՌՆԹ-րի կոդոնների քանակին
2. ի-ՌՆԹ-ի մոլեկուլների քանակին
3. ԴՆԹ-ի մոլեկուլում գտնվող գեների քանակին
4. ռիբոսոմների վրա սինթեզվող սպիտակուցների քանակին

**8. Ո՞ր միացության մոլեկուլն է եռաշղթա.**

1. ԴՆԹ -ի
2. ՌՆԹ-ի
3. կոլագենի
4. ֆիբրինի

**9. Վիրահատարանի ստերիլիզացիայի մեթոդներից ո՞րն է առավել արդյունավետ ազդում բակտերիաների վրա:**

1. հատակի լվացումը
2. օդափոխությունը
3. ճառագայթումը ուլտրամանուշակագույն ճառագայթներով
4. օդի տաքացումը մինչև +30°C

10. Ենթաստամոքսային գեղձի հյուսքը պարունակում է.

1. ինսուլին
2. ադաթթու
3. ամիլազ
4. պեպսին

11. Որոշ նորածին երեխաների աստամները դուրս են գալիս 6 ամսից շատ ավելի ուշ: Օրգանիզմում ո՞ր տարրերի պակասի դեպքում է սա տեղի ունենում:

1. մանգանի և երկաթի
2. կալցիումի և ֆոսֆորի
3. պղնձի և ցինկի
4. ծծմբի և ազոտի

12. Եթե մկանի հյուսվածքային հեղուկում կալիումի իոնների կոնցենտրացիան բարձր է, ապա արյան հոսքը այդ մկանում

1. չի փոխվի
2. կմեծանա
3. կնվազի
4. կդադարի

13. Էներգետիկ փոխանակության մաս է հանդիսանում.

1. գլյուկոզի օքսիդացումը
2. նատրիումի աղերի լուծումը ջրում
3. սպիտակուցի սինթեզը
4. ֆոտոսինթեզը

14. Մեյոզի առաջին բաժանումը ավարտվում է.

1. գամետների առաջացմամբ
2. հապլոիդ կորիզների առաջացմամբ
3. դիպլոիդ բջիջների առաջացմամբ
4. տարբեր պլոիդության բջիջների առաջացմամբ

15. Ռեդուկցիոն բաժանումը (մեյոզը) տեղի է ունենում.

1. բակտերիաների սպորների առաջացման ընթացքում
2. ուլտրաիքսի զոոսպորների առաջացման ընթացքում
3. պենիցիլի կոնիդիումների վրա սպորների առաջացման ընթացքում
4. կկվավուլի սպորների առաջացման ընթացքում

Կարճ պատասխանով առաջադրանքներ

16. Քանի՞ ԴՆԹ-ի մոլեկուլ է պարունակում հոմոլոգ քրոմոսոմների զույգը միտոզի մետաֆազում:

17. Քանի՞ սերմնասկզբնակ կա եղևնու իգական կոնի յուրաքանչյուր սերմնաթեփուկի վրա:

18. Կապուտաչյա, մուգ գույնի մազերով տղամարդը (aaBb) ամուսնացել է շագանակագույն աչքերով և բաց գույնի մազերով կնոջ (Aabb) հետ: Քանի՞ տոկոս է կապուտաչյա (a) և բաց գույնի մազերով (b) երեխա ծնվելու հավանականությունը այդ զույգի մոտ:

19 Քանի՞ տիպի գամետ է առաջացնում օրգանիզմը, որը հետերոզիգոտ է ըստ երեք հատկանիշների:

20. Քանի՞ տիպի գամետ է առաջացնում CcBb զիգոտը, եթե C(c) և B(b) գեները շղթայակցված են ժառանգվում: